Արձանագրություն N 2

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11.07.2017թ
ժամը 11:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան/ գնահատող /
Ա. Գրիգորյան / գնահատող /
Գ. Գևորգյան / բացող /

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան

Բացակայում էր՝ Ֆ. Սարգսյան/ բացող /

1. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի հունիսի 30-ին, ժամը 11:00-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

գ) Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հուլիսի 04-ին, ժամը 15:00-ին:

դ) Ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Հասցե*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ-ի	ք.Գյումրի, Ծուլուկիձե5	350 000	-	350 000
2	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	ք.Վանաձոր, Վարդանանց 23/159	790 000	-	790 000
3	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	ք.Հրազդան, Միկրոշրջան 209/14	3 000 000	-	3 000 000

ե) <<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է, քանի որ գնի առաջարկի հավելվածում *<<Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/>>* սյան մեջ բացակայում է տառերով գրվածը, ինչպես նաև բացակայում է տուժանքի մասին համաձայնագրի ամսաթիվը:

զ) <<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է, քանի որ հայտի ապահովման գումարը փոքր է հրավերով պահանջվող չափից (հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսի փոխարեն ներկայացվել է երկու տոկոսը):

է) <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը (790 000 ՀՀ դրամ) գերազանցում է գնման առարկայի նախահաշվային արժեքը (450 000 ՀՀ դրամ):

ը) Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձաժողովը որոշել է կասեցնել նիստը, ծանուցել <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ին և հրավիրել ներկայանալու գնային առաջարկի նվազեցման բանակցությունների (ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում)) 2017 թվականի հուլիսի 11-ին ժամը 11:30-ին կայանալիք <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստին:

թ) <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար հրավիրված գնային առաջարկի նվազեցման բանակցությունների արդյունքում <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն առաջարկել է *ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները* կատարել հետևյալ գնով՝ 430 000 (չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	բավարար
2	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ	անբավարար
2	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/7>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հուլիսի 18-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Գ. Գևորգյան

---------- Տ. Վասիլյան

Քարտուղար